վորներում՝ առանձին ակնարկների ձևով։ Բանաստեղծի կենսագրության ուսումնասիրության համար օժանդակ նշանակություն ունի նրա ապրած ժամանակաշրջանում Վրաստանի մշակութային կյանքում հայերի ունեցած մասնակցության հարցի լուսաբանումը։ Այդպիսի փորձ էր արված Գրականության ինստիտուտի ասպիրանտ Պ. Մուրադյանի զեկուցման մեջ։

Նստաշրջանի արդյունքներն ամփոփեց Գրականության ինստիտուտի դիրեկտոր Գ. Հովնանը։

Վ. Գ.

## ՄԵԾԱՐՄԱՆ ԵՐԵԿՈ

*1961 թ. դեկտեմբերի 27-ին Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայում տեղի ունեցավ երեկո, նվիրված մեր ռևսպուբլիկայի ավագագույն գրականագետներից մեկի՝ Խորեն Սարգսյանի ծննդյան 70 և գիտական գործունեության 40-ամյակին։ Հոբելյարին մեծարելու էին եկել գրականագետներ, գրողներ, պատմաբաններ, գիտության այլ բնագավառների ներկայացուցիչներ, ասպիրանտներ և ուսանողներ։*

*Երեկոն ներածական խոսքով բաց արեց Հայկական ՍՍՌ ԳԱ Գրականության ինստիտուտի դիրեկտոր Գ. Հովնանը։ Բանասիրական գիտությունների թեկնածու Ա. Ինճիկյանը Գրականության ինստիտուտի դիրեկցիայի և ոչ կոլեկտիվի կողմից ջերմորեն շնորհավորելով հոբելյարին, համառոտակի բնութագրեց նրա կյանքի ուղին և գիտական-ստեղծագործական բեղմնավոր գործունեությունը։*

*Խ. Սարգսյանը երկար տարիներ աշխատել է Գրականության թանգարանում, նախ որպես բաժնի վարիչ, իսկ ապա՝ դիրեկտոր։ Նրա ջանքերով հավաքվել ու գիտական մշակման են ենթարկվել հայ դասական գրողների բազմաթիվ ձեռագրեր։ Հայկական ՍՍՌ ԳԱ ստեղծման օրից Խ. Սարգսյանն աշխատանքի է անցնում Գրականության ինստիտուտում, որի դիրեկտորն է եղել 1943—47 թվականներին։ Այժմ նա նույն ինստիտուտի հայ հին գրականության սեկտորի վարիչն է։ Նրա բեղմնավոր գրչին են պատկանում մի քանի տասնյակ ուսումնասիրություններ։ Հատկապես հետաքրքիր ու արժեքավոր են Մ. Նալբանդյանին, Գ. Աղայանին, Վ. Տերյանին, Ստ. Զորյանին, Ա. Բակունցին, Մ. Աբեղյանին նվիրված հետազոտությունները։*

*Խ. Սարգսյանը աչքի ընկնող աշխատանք է կատարել տեքստաբանության բնագավառում։ Նա է նախապատրաստել և իրականացրել Պ. Պռոշյանի, Գ. Աղայանի երկերի ու անտիպ նամակների առաջին գիտական հրատարակությունը, ինչպես նաև Մ. Նալբանդյանի ստեղծագործությունների երկհատորյակը՝ ռուսերեն։*

*Մեծարման երեկոյին վաստակավոր հոբելյարին ջերմորեն ողջունեցին՝ Հայկական ՍՍՌ ԳԱ Նախագահության անունից՝ Ա. Կարինյանը, Հայաստանի Սովետական գրողների միության վարչության կողմից՝ Հր. Թամրազյանը, Լեզվի ինստիտուտից՝ Ե. Տեր-Մինասյանը, Արվեստի ինստիտուտից՝ Մ. Մուրադյանը։ Ողջույններ հղվեցին նաև Մատենադարանի, Պատմության ինստիտուտի, Ակադեմիայի Հրատարակչության, Երևանի Պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետի, Հնագույն մանկավարժական ինստիտուտի, Գրականության և արվեստի թանգարանի, Հնագիտության և ազգագրության ինստիտուտի կոլեկտիվների, Քաղաքական և գիտական գիտելիքների տարածման ընկերության վարչության, Գրականության ինստիտուտի սովետահայ, հայ հին և նոր գրականության սեկտորների կողմից։ Բանաստեղծ Հ. Սահյանը կարդաց հոբելյարին նվիրված իր ստեղծագործությունը։*

*Երեկոյին հրապարակվեց Հայկական ՍՍՌ Գերագույն Սովետի Նախագահության հրամանագիրը Խ. Սարգսյանին գիտության վաստակավոր գործչի կոչում շնորհելու մասին։*

*Վերջում շնորհակալական խոսքով հանդես եկավ հոբելյարը։*

Ա. Գ.